



Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ

**Քննական առարկա 3
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ**

Պատասխաններ

Հունվար, 2024թ.

Բաժին Ա. ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Բազմակի ընտրության 25 հարց, յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է 2 միավոր:

1	բ
2	բ
3	բ
4	դ
5	գ
6	դ
7	գ
8	դ
9	ա
10	բ
11	գ
12	ա
13	դ
14	բ
15	բ
16	դ
17	բ
18	գ
19	դ
20	ա
21	բ
22	դ
23	բ
24	բ
25	դ

Ընդամենը 50 միավոր

ՀԱՐՑԸ, ՊԱՏԱՍԽԱՆԻ ՃԻՇՏ ՏԱՐԲԵՐԱԿԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԸ

1. Պարտապան իրավաբանական անձի լուծարման հանձնաժողովը (լուծարողը) պարտավոր է պարտապանին սնանկ ճանաչելու դիմում ներկայացնել դատարան, եթե լուծարման ժամանակ պարզվում է, որ.

բ) լուծարվող իրավաբանական անձի գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջներն ամբողջովին բավարարելու համար.

Հիմք՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենք 5-րդ հոդված

Հոդված 5. Պարտապանի՝ դատարան դիմելու պարտականությունը

2. Պարտապան իրավաբանական անձի լուծարման հանձնաժողովը (լուծարողը) պարտավոր է պարտապանին սնանկ ճանաչելու դիմում ներկայացնել դատարան, եթե լուծարման ժամանակ պարզվում է, որ լուծարվող իրավաբանական անձի գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջներն ամբողջովին բավարարելու համար:

2. Կապալի պայմանագրով աշխատանքը կատարվում է.

բ) Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով, եթե այլ բան նախատեսված չէ կապալի պայմանագրով:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 702 հոդված

Հոդված 702 Կապալառուի միջոցներով աշխատանքներ կատարելը

1. Աշխատանքը կատարվում է կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով, եթե այլ բան նախատեսված չէ կապալի պայմանագրով:

3. Այն դեպքում, երբ աշխատանքի արդյունքի համար երաշխիքային ժամկետ չի սահմանվել, պատվիրատուն կարող է աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել՝ պայմանով, եթե դրանք հայտնաբերված լինեն ողջամիտ ժամկետում, սակայն աշխատանքի արդյունքը հանձնելու օրվանից.

բ) **երկու տարվա** սահմաններում, եթե այլ ժամկետ սահմանված չէ օրենքով, պայմանագրով կամ գործարար շրջանառության սովորույթներով.

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 722

Հոդված 722 Աշխատանքի արդյունքի անպատշաճ որակը հայտնաբերելու ժամկետները

2. Այն դեպքում, երբ աշխատանքի արդյունքի համար երաշխիքային ժամկետ չի սահմանվել, պատվիրատուն կարող է աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել՝ պայմանով, եթե դրանք հայտնաբերված լինեն ողջամիտ ժամկետում, սակայն աշխատանքի արդյունքը հանձնելու օրվանից երկու տարվա սահմաններում, եթե այլ ժամկետ սահմանված չէ օրենքով, պայմանագրով կամ գործարար շրջանառության սովորույթներով:

4. Արտաժամյա աշխատանքներին չեն ներգրավվում՝

դ) Բոլոր պատասխանները ճիշտ են:

*Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 144 հոդված
Հոդված 144 Արտաժամյա աշխատանքի սահմանափակումները*

3. Արտաժամյա աշխատանքներին չեն ներգրավվում՝

- 1) մինչև 18 տարեկան աշխատողները.
- 2) առանց արտադրությունից կամ աշխատանքից կտրվելու՝ հանրակրթական և մասնագիտական դպրոցներում սովորող աշխատողները դասերի օրերին.
- 3) առողջության համար վնասակար և (կամ) վտանգավոր գործոնների ազդեցության պայմաններում աշխատողները.
- 4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և կոլեկտիվ պայմանագրով նախատեսված այլ պայմաններում աշխատողները:

5. Անգործունակ ճանաչված (անգործունակ միայն դատական կարգով կարող է ճանաչվել) քաղաքացու անունից գործարքներ է կնքում նրա.

գ) խնամակալը

*Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 31 հոդված
Հոդված 31 Քաղաքացուն անգործունակ ճանաչելը*

2. Անգործունակ ճանաչված քաղաքացու անունից գործարքներ է կնքում նրա խնամակալը:

6. Ժամանակավոր աշխատանքային պայմանագիրը.

դ) մինչև երկու ամիս ժամկետով կնքվող աշխատանքային պայմանագիրն է:

1. Ժամանակավոր աշխատանքային պայմանագիրը մինչև երկու ամիս ժամկետով կնքվող աշխատանքային պայմանագիրն է:

*Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 101 հոդված
Հոդված 101 Ժամանակավոր աշխատանքային պայմանագիրը*

1. Ժամանակավոր աշխատանքային պայմանագիրը մինչև երկու ամիս ժամկետով կնքվող աշխատանքային պայմանագիրն է:

7. Բաժնետոմսեր թողարկելու իրավունք ունեն.

- ա) Ինչպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները, այնպես էլ բաժնետիրական ընկերությունները.
- բ) Ընկերություններն ու ընկերակցությունները.
- գ) Միայն բաժնետիրական ընկերությունները
- դ) Բոլոր պատասխանները սխալ են:

*Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 106 հոդված
Հոդված 106 Հիմնական դրույթներ բաժնետիրական ընկերության մասին*

2. Բաժնետոմսեր թողարկելու իրավունք ունեն միայն բաժնետիրական ընկերությունները:

8. Գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը.

դ) վեճի դեպքում կողմերին զրկում է ի հաստատումն գործարքի ու նրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու, սակայն նրանց չի զրկում գրավոր և այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքից:

*Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298 հոդված
Հոդված 298 Գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելու հետևանքները*

1. Գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը վեճի դեպքում կողմերին զրկում է ի հաստատումն գործարքի ու նրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու, սակայն նրանց չի զրկում գրավոր և այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքից:

9. Քաղաքացիական իրավունքների օբյեկտներ չեն.

ա) գույքը՝ բացառությամբ դրամական միջոցների, արժեթղթերի և գույքային իրավունքների.

*Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132 հոդված
Հոդված 132 Քաղաքացիական իրավունքների օբյեկտների տեսակները*

Քաղաքացիական իրավունքների օբյեկտներն են՝

- 1) գույքը՝ ներառյալ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները.
- 2) աշխատանքները և ծառայությունները.
- 3) տեղեկատվությունը.
- 4) մտավոր գործունեության արդյունքները՝ ներառյալ դրանց նկատմամբ բացառիկ իրավունքները (մտավոր սեփականություն).
- 5) ոչ նյութական բարիքները:

10. Որո՞նք են վճարային արժեթղթերը.

բ) Չեկը, հասարակ մուրհակը և փոխանցելի մուրհակը.

*Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 153 հոդված
Հոդված 153 Ընդհանուր դրույթներ*

3. Չեկը, հասարակ մուրհակը և փոխանցելի մուրհակը (վճարագիրը) վճարային արժեթղթեր են:

11. Նշված տարբերակներից ո՞րն է ճիշտ

գ) Եթե պայմանագիրը չկատարելու համար պատասխանատու է նախավճար տված կողմը, այն մնում է մյուս կողմին: Եթե պայմանագիրը չկատարելու համար պատասխանատու է նախավճար ստացած կողմը, նա պարտավոր է մյուս կողմին վճարել նախավճարի գումարի կրկնապատիկը:

*Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 396 հոդված
Հոդված 396 Նախավճարով ապահովված պարտավորությունը դադարելու և այն չկատարելու հետևանքները*

2. Եթե պայմանագիրը չկատարելու համար պատասխանատու է նախավճար տված կողմը, այն մնում է մյուս կողմին: Եթե պայմանագիրը չկատարելու համար պատասխանատու է նախավճար ստացած կողմը, նա պարտավոր է մյուս կողմին վճարել նախավճարի գումարի կրկնապատիկը:

12. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցները.

ա) պատասխանատու չեն նրա պարտավորությունների համար և իրենց ներդրած ավանդների արժեքի սահմաններում կրում են ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը.

*Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 95 հոդված
Հոդված 95 Հիմնական դրույթներ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասին*

1. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն է համարվում մեկ կամ մի քանի անձանց հիմնադրած ընկերությունը, որի կանոնադրական կապիտալը բաժանված է կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի: Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցները պատասխանատու չեն նրա պարտավորությունների համար և իրենց ներդրած ավանդների արժեքի սահմաններում կրում են ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

13. Գրավի տեսակներից են՝

դ) բոլոր պատասխանները ճիշտ են

*Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 253 հոդված
Հոդված 253 Գրավի տեսակները*

Գրավի տեսակներն են՝

- 1) գրավականը.
- 2) գրավատուն հանձնված գույքի գրավը.
- 3) իրավունքների գրավը.
- 4) դրամական միջոցների գրավը.
- 5) կոշտ գրավը.
- 6) շրջանառության մեջ գտնվող ապրանքների գրավը.
- 7) հիփոթեքը:

14. Ամենօրյա աշխատաժամանակի տևողությունը.

բ) չի կարող անցնել ութ աշխատանքային ժամից, բացառությամբ սույն օրենսգրքով, օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերի.

*Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 139 հոդված
Հոդված 139 Աշխատաժամանակի տևողությունը*

2. Ամենօրյա աշխատաժամանակի տևողությունը չի կարող անցնել ութ աշխատանքային ժամից, բացառությամբ սույն օրենսգրքով, օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերի:

15. Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ

բ) Դուստր ընկերությունը պատասխանատվություն չի կրում հիմնական ընկերակցության կամ ընկերության պարտքերի համար.

*Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 75 հոդված
Հոդված 75 Դուստր տնտեսական ընկերություն*

2. Դուստր ընկերությունը պատասխանատվություն չի կրում հիմնական ընկերակցության կամ ընկերության պարտքերի համար:

16. Եթե ակտը բողոքարկվել է վարչական և դատական կարգով միաժամանակ, ապա.

դ) բողոքը ենթակա է դատական քննության, որի դեպքում վարչական մարմնում հարուցված վարույթը կարճվում է:

*Հիմք՝ Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի 70 հոդված
Հոդված 70 Բողոքարկման կարգը*

3. Եթե ակտը բողոքարկվել է վարչական և դատական կարգով միաժամանակ, ապա բողոքը ենթակա է դատական քննության, որի դեպքում վարչական մարմնում հարուցված վարույթը կարճվում է:

17. Կառուցապատման իրավունքը, եթե օրենքով ավելի կարճ ժամկետ նախատեսված չէ, տրամադրվում է պայմանագրով սահմանված ժամկետով և չի կարող գերազանցել.

բ) 99 տարին.

*Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 204՝
Հոդված 204՝ Հողամասի կառուցապատման իրավունքը*

5. Կառուցապատման իրավունքը, եթե օրենքով ավելի կարճ ժամկետ նախատեսված չէ, տրամադրվում է պայմանագրով սահմանված ժամկետով և չի կարող գերազանցել 99 տարին:

18. Ո՞րն է ձեռնարկատիրական գործունեությունը (գտնել ամբողջական պատասխանը).

գ) անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայությունների մատուցելուց շահույթ ստանալն է:

*Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 2
Հոդված 2 Ձեռնարկատիրական գործունեությունը*

Ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայությունների մատուցելուց շահույթ ստանալն է:

19. Աշխատանքային պայմանագրի լուծումն աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու պատճառով չի համարվում հետևյալը.

դ) հրապարակել է տեղեկատվություն կամ դրա մասին հայտնել է մրցակից կազմակերպությանը:

*Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի հոդված 122
Հոդված 122 Աշխատանքային պայմանագրի լուծումն աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու պատճառով*

Գործատուն իրավունք ունի սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքով լուծելու աշխատանքային պայմանագիրը վստահությունը կորցրած աշխատողի հետ, եթե աշխատողը՝

- 1) կատարել է այնպիսի արարք, որի հետևանքով գործատուն կրել է կամ կարող էր կրել նյութական վնաս.
- 2) ուսումնադաստիարակչական գործառույթներ իրականացնող աշխատողը թույլ է տվել տվյալ աշխատանքը շարունակելու հետ անհամատեղելի արարք.
- 3) հրապարակել է պետական, առևտրային կամ տեխնոլոգիական գաղտնիքներ կամ դրանց մասին հայտնել է մրցակից կազմակերպությանը.
- 4) չի պահպանել (խախտել է) աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության մասին իրավական ակտերի, աշխատանքների կազմակերպման և իրականացման կանոնների, հրահանգների պահանջները, որն առաջացրել է կամ կարող էր առաջացնել ծանր հետևանքներ՝ վտանգելով անձանց կյանքն ու առողջությունը կամ իրական սպառնալիք ստեղծելով անձանց կյանքի և առողջության համար կամ նրանց կյանքին ու առողջությանը պատճառելով վնաս.
- 5) անօրինական (առանց համաձայնեցման կամ տեղեկացման) օգտագործել է գործատուի կամ այլ աշխատողների համակարգչային տեխնիկան կամ տեղեկատվական համակարգերը (տեղեկատվական համակարգեր մուտք գործելու միջոցներ (մուտքանուն, գաղտնաբառ և այլն)), որի միջոցով ձեռք է բերել աշխատանքային կամ անձնական տվյալներ, իրականացրել է տվյալների անօրինական օգտագործում, ձայնագրում, ոչնչացում, վերափոխում, ուղեփակում, կրկնօրինակում, տարածում կամ թվային տեխնոլոգիաների միջամտությամբ իրականացրել է գործողություններ, այդ թվում՝ վիրուսային կամ ծրագրային կարգաբերումներ, որոնք կարող էին խաթարել կամ խաթարել են գործատուի բնականոն աշխատանքը:

20. Ո՞րը չի ներառում աշխատաժամանակը.

ա) որպես զինվորական ծառայության մեջ չգտնվող անձ (կամավորական)՝ կամավորական հիմունքներով Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ պաշտպանության ոլորտում պետական լիազոր մարմնի հետ ռազմական փոխօգնության պայմանագրերի հիման վրա այլ երկրների պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու ժամանակահատվածը:

*Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի հոդված 138
Հոդված 138 Աշխատաժամանակի կառուցվածքը*

Աշխատաժամանակում չեն ներառվում, սակայն աշխատանքային ստաժում հաշվարկվում են՝

2.1) որպես զինվորական ծառայության մեջ չգտնվող անձ (կամավորական)՝ կամավորական հիմունքներով Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ պաշտպանության ոլորտում պետական լիազոր մարմնի հետ ռազմական փոխօգնության պայմանագրերի հիման վրա այլ երկրների պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու ժամանակահատվածը.

21. Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում՝

բ) Դրամ կամ այլ գույք հանձնելու պահից.

*Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 877 հոդված
Հոդված 877 Փոխառության պայմանագիր*

1. Փոխառության պայմանագրով մեկ կողմը (փոխատուն) մյուս կողմի (փոխառուի) սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխատուին վերադարձնել միևնույն գումարի դրամ (փոխառության գումարը) կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք:

Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրամ կամ այլ գույք հանձնելու պահից:

22. Բաժնետիրական ընկերությունում խոշոր գործարք կնքելու մասին որոշումը ընդունում է.

դ) Ժողովը՝ դրան մասնակցող բաժնետերերի (քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի) ձայների 3/4-ով, եթե Ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ:

*Հիմք՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին ՀՀ օրենքի» հոդված 61
Հոդված 61 Ընկերության գույքի ձեռքբերման կամ օտարման հետ կապված խոշոր գործարքների կնքումը*

1. Խոշոր գործարք կնքելու մասին որոշումը ընդունում է ժողովը՝ դրան մասնակցող բաժնետերերի (քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի) ձայների 3/4-ով, եթե Ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ:

23. Նշված տարբերակներից ո՞րն է սխալ

բ) Տնօրինման իրավունքը գույքի ճակատագիրը որոշելու փաստացի ապահովված հնարավորությունն է:

*Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163 հոդված
Հոդված 163 Սեփականության իրավունքի հասկացությունը և բովանդակությունը*

1. Սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը:

Տիրապետման իրավունքը գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

Օգտագործման իրավունքը գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Օգուտը կարող է լինել եկամտի, պտուղների, աճի, ծնածի և այլ ձևերով:
Տնօրինման իրավունքը գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

24. Գործատուի մոտ փորձնականների թիվը չի կարող գերազանցել.

բ) տվյալ պահին աշխատողների թվի տասը տոկոսը.

Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի հոդված 201.3

Հոդված 201.3 Գործատուի կողմից աշխատանքային պրակտիկա կազմակերպելը

3. Գործատուի մոտ փորձնականների թիվը չի կարող գերազանցել տվյալ պահին աշխատողների թվի տասը տոկոսը:

25. Ո՞ր պնդումն է սխալ.

Գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝

դ) աշխատողի երկարատև անաշխատունակության դեպքում (եթե աշխատողը ժամանակավոր անաշխատունակության մեջ է գտնվել ավելի քան երկու ամիս անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում՝ ավելի քան 60 օր՝ չհաշված հղիության և ծննդաբերության արձակուրդի օրերը):

Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի հոդված 113

Հոդված 113 Աշխատանքային պայմանագրի լուծումը գործատուի նախաձեռնությամբ

1. Գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝

1) գործատուի լուծարման (գործունեության դադարման), պետական հաշվառումից հանվելու, նոտար գործատուի դեպքում՝ պաշտոնից ազատվելու դեպքերում.

2) աշխատանքի ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքում.

3) աշխատողի՝ զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին չհամապատասխանելու դեպքում.

4) աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու դեպքում.

5) աշխատողի կողմից աշխատանքային պայմանագրով կամ ներքին կարգապահական կանոններով իրեն վերապահված պարտականությունները առանց հարգելի պատճառի պարբերաբար չկատարելու դեպքում.

6) աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքում.

7) աշխատողի երկարատև անաշխատունակության դեպքում (եթե աշխատողը ժամանակավոր անաշխատունակության մեջ է գտնվել ավելի քան վեց ամիս անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում՝ ավելի քան 180 օր՝ չհաշված հղիության և ծննդաբերության արձակուրդի օրերը).

8).....

ԲԱԺԻՆ Բ. Պատասխաններ

ԽՆԴԻՐ 1

Հարց 1

Սույն հարցի շրջանակներում անհրաժեշտ է անդրադառնալ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերին, կարգին, ինչպես նաև կարգապահական տույժեր կիրառելու ընթացակարգին: Այսպես, խնդրի փաստերի համաձայն Աշխատողի և Գործատուի միջև ծագել են աշխատանքային հարաբերություններ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «1. Աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով:»: Աշխատողի անմիջական պարտականությունները ներառում են Գործատուի հաճախորդների հաշվապահական հաշվառումն իրականացնելը կամ հարկային խորհրդատվությունը տրամադրելը: Օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը լուծվում է, ի շարս այլնի, նաև գործատուի նախաձեռնությամբ: Օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը (...) աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքում: Օրենսգրքի 122-րդ հոդվածի համաձայն՝ գործատուն իրավունք ունի Օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքով լուծելու աշխատանքային պայմանագիրը վստահությունը կորցրած աշխատողի հետ, եթե աշխատողը՝ 1) կատարել է այնպիսի արարք, որի հետևանքով գործատուն կրել է կամ կարող էր կրել նյութական վնաս. 2) ուսումնադաստիարակչական գործառույթներ իրականացնող աշխատողը թույլ է տվել տվյալ աշխատանքը շարունակելու հետ անհամատեղելի արարք. 3) հրապարակել է պետական, առևտրային կամ տեխնոլոգիական գաղտնիքներ կամ դրանց մասին հայտնել է մրցակից կազմակերպությանը.

4) չի պահպանել (խախտել է) աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության մասին իրավական ակտերի, աշխատանքների

կազմակերպման և իրականացման կանոնների, հրահանգների պահանջները, որն առաջացրել է կամ կարող էր առաջացնել ծանր հետևանքներ՝ վտանգելով անձանց կյանքն ու առողջությունը կամ իրական սպառնալիք ստեղծելով անձանց կյանքի և առողջության համար կամ նրանց կյանքին ու առողջությանը պատճառելով վնաս:

5) անօրինական (առանց համաձայնեցման կամ տեղեկացման) օգտագործել է գործատուի կամ այլ աշխատողների համակարգչային տեխնիկան կամ տեղեկատվական համակարգերը (տեղեկատվական համակարգեր մուտք գործելու միջոցներ (մուտքանուն, գաղտնաբառ և այլն)), որի միջոցով ձեռք է բերել աշխատանքային կամ անձնական տվյալներ, իրականացրել է տվյալների անօրինական օգտագործում, ձայնագրում, ոչնչացում, վերափոխում, ուղեփակում, կրկնօրինակում, տարածում կամ թվային տեխնոլոգիաների միջամտությամբ իրականացրել է գործողություններ, այդ թվում՝ վիրուսային կամ ծրագրային կարգաբերումներ, որոնք կարող էին խաթարել կամ խաթարել են գործատուի բնականոն աշխատանքը:

Այսինքն, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերից է համարվում նաև աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելը, որն, ի թիվս այլնի, դրսևորվել է նաև այլ աշխատողների համակարգչային տեխնիկայի միջոցով (այդ թվում՝ մուտքանուն և գաղտնաբառ լրացնելով հանդերձ) աշխատանքային տվյալների ձեռքբերումը: Այսինքն, անկախ այն հանգամանքից, այդ տեղեկատվությունը իրենից առևտրային գաղտնիք է ներկայացրել, թե ոչ, միևնույն է, աշխատողը որոշակի գործողությունների կատարման շնորհիվ ձեռք է բերել Գործատուին անմիջապես վերաբերող տեղեկատվություն՝ անկախ այդ տեղեկատվության հրապարակման/տարածման հանգամանքից: Օրենսգրքի 123-րդ հոդվածի համաձայն. «Սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերով նախատեսված դեպքերում գործատուն իրավունք ունի աշխատանքային պայմանագիրը լուծելու՝ առանց աշխատողին ծանուցելու»: Օրենսգրքի 222-րդ հոդվածի համաձայն՝ կարգապահական պատասխանատվության կարող է ենթարկվել միայն աշխատանքային կարգապահությունը խախտած աշխատողը: Օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ աշխատանքային կարգապահությունը խախտելու համար կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը՝ (...) Օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերի հիմքերով աշխատանքային պայմանագրի լուծում: Այսպիսով, կարգապահական խախտման դեպքում որպես կարգապահական տույժ կարող է կիրառվել նաև վստահությունը կորցնելու հիմքով աշխատանքային պայմանագրի լուծումը: Ընդ որում, վստահությունը կորցնելու հիմքով աշխատանքային պայմանագրի լուծման դեպքում աշխատողին ծանուցելու պարտականությունը գործատուն չունի: Միաժամանակ, Օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն. «1. Մինչև կարգապահական տույժի կիրառումը գործատուն պետք է աշխատողից գրավոր կերպով պահանջի խախտման մասին գրավոր բացատրություն՝ տրամադրելով ողջամիտ ժամկետ: Եթե գործատուի սահմանած ողջամիտ ժամկետում աշխատողն առանց հարգելի պատճառների չի ներկայացնում գրավոր բացատրություն, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել առանց գրավոր բացատրության»: Օրենսգրքի 227-րդ հոդվածի

համաձայն. «1. Կարգապահական տույժը կարող է կիրառվել խախտումը հայտնաբերելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, չհաշված աշխատողի ժամանակավոր անաշխատունակության պատճառով բացակայության, գործուղման կամ արձակուրդի մեջ գտնվելու ժամանակահատվածները: 2. Կարգապահական տույժը չի կարող կիրառվել, եթե խախտումը կատարելու օրվանից անցել է վեց ամիս: ... :»: Սույն խնդրի փաստերի համաձայն՝ կարգապահական խախտումը կատարվել է 2018 թվականից մինչև 2022 թվականի սեպտեմբերի 12-ը և հայտնաբերվել է 15.09.2022 թվականին: Աշխատողը արձակուրդում է գտնվել 13.09.2022 թվականի մինչև 13.10.2022 թվականը, իսկ 14.10.2022 թվականից մինչև 20.10.2022 թվականը չվճարվող արձակուրդում: Կադրերի բաժինը 12.10.2022 թվականին աշխատողին ուղարկել է դեպքի մասին գրավոր բացատրություն ներկայացնելու վերաբերյալ գրություն՝ բացատրություն ներկայացնելու համար սահմանելով 3 աշխատանքային օր ժամկետ: Աշխատողը 14.10.2022 թվականին ստանալով գրությունը՝ որևէ ձևով չի արձագանքում դրան: 21.10.2022 թվականին Գործատուի տնօրենն ընդունել է աշխատողին աշխատանքից ազատելու մասին հրաման: Այսպիսով, վկայակոչված իրավական նորմերի և խնդրի փաստերի համադրման արդյունքում կարող են գալ հետևյալ եզրահանգմանը: Գործատուն աշխատողին ազատել է աշխատանքից վերջինիս արձակուրդից վերադառնալուց հետո, այսինքն բացակայել է աշխատանքային պայմանագիրը լուծելու՝ Օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված արգելքը: Աշխատանքային պայմանագրի լուծման համար առկա են եղել անհրաժեշտ հիմքերը, իսկ գործատուն պահպանել է կարգապահական վարույթի ընթացակարգը, մասնավորապես գրավոր բացատրագիր է պահանջել աշխատողից: Քանի որ Օրենսգրքը սահմանում է միայն աշխատանքային պայմանագրի լուծման արգելք աշխատողի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում, այլ ոչ թե ընդհանրապես կարգապահական վարույթ հարուցելու արգելք, ապա այդ մասով Ընկերության գործողությունները ևս իրավաչափ են: Կարգապահական տույժը կիրառվել է 21.10.2022 թվականին, իսկ խախտումը կրել է տևական բնույթ և դրա վերջին կատարման օրը 13.09.2022 թվականն է (եթե խախտումը չբացահայտվեր, ապա կշարունակվեր նաև ապագայում), այսինքն պահպանվել է նաև 1-ամյա ժամկետի պահանջը: Հարկ է նշել, որ սույն դեպքում էական չէ 2018-2021 թվականի օգոստոս ամիսների ընթացքում կատարված խախտումների համար վաղեմության ժամկետն անցած լինելու հանգամանքը, քանի որ խախտումը կրել է տևական բնույթ և դրա մեկ անգամյա դրսևորումն էլ բավարար է աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու համար:

Հարց 2. Սույն հարցի շրջանակներում անհրաժեշտ է անդրադառնալ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ և 114-րդ հոդվածներով սահմանված կարգավորումներին:

Հոդված 113. Աշխատանքային պայմանագրի լուծումը գործատուի նախաձեռնությամբ

1. Գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝

1) գործատուի լուծարման (գործունեության դադարման), պետական հաշվառումից հանվելու, նոտար գործատուի դեպքում՝ պաշտոնից ազատվելու դեպքերում.

2) աշխատանքի ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական

անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքում.

3) աշխատողի՝ զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին չհամապատասխանելու դեպքում.

4) աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու դեպքում.

5) աշխատողի կողմից աշխատանքային պայմանագրով կամ ներքին կարգապահական կանոններով իրեն վերապահված պարտականությունները առանց հարգելի պատճառի պարբերաբար չկատարելու դեպքում.

6) աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքում.

7) աշխատողի երկարատև անաշխատունակության դեպքում (եթե աշխատողը ժամանակավոր անաշխատունակության մեջ է գտնվել ավելի քան վեց ամիս անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում՝ ավելի քան 180 օր՝ չհաշված հղիության և ծննդաբերության արձակուրդի օրերը).

8) աշխատողի կողմից ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ աշխատավայրում գտնվելու կամ աշխատավայրում կամ աշխատավայրից դուրս աշխատանքային գործառույթներն իրականացնելու դեպքում.

9) անհարգելի պատճառով ամբողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում աշխատողի՝ աշխատանքի չներկայանալու դեպքում.

10) պարտադիր բժշկական զննությունից աշխատողի հրաժարվելու կամ խուսափելու դեպքում.

11) ...

12) օտարերկրացու կացության կարգավիճակն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու դեպքում.

13) սույն օրենսգրքի 108-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված դեպքում աշխատանքի չթույլատրվելու հետևանքով ավելի քան 10 աշխատանքային օր (հերթափոխ) անընդմեջ կամ վերջին երեք ամսվա ընթացքում ավելի քան 20 աշխատանքային օր (հերթափոխ) աշխատողի՝ իր աշխատանքային պարտականությունները չկատարելու դեպքում:

Հոդված 114. Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու արգելքը

1. Աշխատանքային պայմանագրի լուծումը գործատուի նախաձեռնությամբ արգելվում է՝

1) աշխատողի ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածում, բացառությամբ սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսված դեպքերի.

2) աշխատողի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում.

2.1) հղի կանանց հետ՝ հղիության մասին գործատուին տեղեկանք ներկայացնելու օրվանից մինչև հղիության և ծննդաբերության արձակուրդի ավարտման օրվանից հետո մեկ ամիսը լրանալը.

2.2) երեխային փաստացի խնամող՝ արձակուրդում չգտնվող անձի՝ մինչև մեկ տարեկան երեխա խնամելու ամբողջ ժամանակահատվածում, բացառությամբ սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 5-րդ, 6-րդ, 8-րդ և 10-րդ կետերով նախատեսված դեպքերի.

3) գործադուլ հայտարարելու մասին որոշումն ընդունելուց հետո և գործադուլի ընթացքում, եթե աշխատողն այդ գործադուլին մասնակցում է սույն օրենսգրքով սահմանված կարգով.

4) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աշխատողի վրա դրված պարտականությունների կատարման ժամանակահատվածում, բացառությամբ սույն օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերի.

5) տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետևանքների անհապաղ վերացման ժամանակահատվածում, եթե, այդ դեպքերով պայմանավորված, աշխատողը չի ներկայացել աշխատանքի.

6) ուսումնական (այդ թվում՝ նախադպրոցական) հաստատությունների համար նախատեսված արձակուրդների չալանավորված տեղափոխման կամ չալանավորված տրամադրման ժամանակահատվածում, եթե մինչև տասներկու տարեկան երեխայի խնամքը կազմակերպելու նպատակով աշխատողը չի ներկայացել աշխատանքի:

2. Եթե աշխատողը սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամանակահատվածների ավարտից հետո չի ներկայանում աշխատանքի, ապա գործատուն սույն գլխով նախատեսված հիմքերով կարող է լուծել աշխատանքային պայմանագիրը:

3. Սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դեպքերում աշխատանքային պայմանագիրը լուծելիս չեն կիրառվում սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված սահմանափակումները:

4. Աշխատանքային պայմանագրի լուծման օրինական պատճառ չի կարող համարվել՝¹⁾ արհեստակցական միությանը անդամակցելը կամ ոչ աշխատանքային ժամերին, իսկ գործատուի համաձայնությամբ նաև աշխատանքային ժամերին արհեստակցական միության գործունեությանը մասնակցելը.

2) երբևէ աշխատողների ներկայացուցիչ հանդիսանալը.

3) օրենքների, այլ նորմատիվ իրավական ակտերի կամ կոլեկտիվ պայմանագրի խախտման համար գործատուին պահանջներ ներկայացնելը.

4) սեռը, ռասան, մաշկի գույնը, ազգությունը, լեզուն, ծագումը, քաղաքացիությունը, սոցիալական դրությունը, կրոնը, ամուսնական վիճակը և ընտանեկան դրությունը, համոզմունքները կամ տեսակետները, կուսակցություններին կամ հասարակական կազմակերպություններին անդամակցելը, ինչպես նաև աշխատողի գործնական

հատկանիշների հետ չկապված այլ հանգամանքները, բացառությամբ սույն օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի:

5) տարիքը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Խնդիր 2 /12 միավոր/

Պատասխան /հարց 1 /5 միավոր/

Խնդրում ներկայացված Անշարժ գույքի վաճառքն իրենից ներկայացնում է շահագրգռվածության առկայությամբ կնքված գործարք, որը կարգավորվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի (Օրենք) 62-65 հոդվածներով: Ըստ էության, այն հանգամանքը, որ անշարժ գույքը վաճառվել է Ընկերությանը փոխկապակցված անձի, ինքնին իրավախախտում չէ: Նորիկ Կիրակոսյանի այն պնդումը, որ խորհրդի նախագահը չարաշահել է իր լիազորությունները, այդքան էլ միանշանակ չէ, սակայն խորհրդի ընդհանուր գործողությունը հարցի շուրջ իրավաչափ չէ: Օրենքի 64-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը նախատեսում են շահագրգռվածության առկայությամբ գործարքների՝ խորհրդի կողմից ընդունելու կարգը: Նույն հոդվածի 3-րդ կետում նշված են այն դեպքերը, երբ շահագրգռվածության առկայությամբ գործարքների վերաբերյալ որոշումը պետք է կայացնի ժողովը:

Որոշումը գործարքը կնքելու մասին, որում առկա է շահագրգռվածությունը, ընդունվում է ժողովի կողմից քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր եւ գործարքի կատարման մեջ շահագրգռվածություն չունեցող բաժնետերերի ձայների մեծամասնությամբ, եթե՝

ա) գործարքով վճարման ենթակա գումարը կամ գործարքի առարկա հանդիսացող գույքի՝ Օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքը հավասար է Ընկերության ակտիվների արժեքի առնվազն 10 տոկոսին:

բ) գործարքը եւ/կամ մի շարք փոխկապակցված գործարքներ կնքվում են Ընկերության քվեարկող բաժնետոմսերի կամ քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող Ընկերության այլ արժեթղթերի տեղաբաշխման նպատակով, եւ որոնց քանակն ավելի է Ընկերության՝ արդեն տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի քանակի 2 տոկոսից:

Ըստ էության ակնհայտ է, որ գործարքի առարկա հանդիսացող գույքի արժեքն Ընկերության ակտիվների 10 տոկոսից ավելին է, ուստի այն պետք է հաստատվեր ժողովի կողմից: Այս պահանջը չի պահպանվել, քանի որ գործարքի կատարմանը հավանություն է տվել խորհուրդը, չնայած որ ինչպես Ընկերության տնօրենը տեղեկացրել էր, խորհրդի նախագահը՝ որպես շահագրգռվածություն ունեցող անձ, քվեարկությանը չէր մասնակցել: Սակայն խորհրդի նախագահի խորհրդի նիստին չմասնակցելու փաստն ամենևին չի վկայում այն մասին, որ խորհուրդն իր լիազորությունների վերազանցում թույլ չի տվել:

Գործարքի հետ կապված մյուս իրավական խնդիրը կայանում է նրանում, որ անշարժ գույքի շուկայական արժեքի վերաբերյալ եզրակացություն չի եղել: Օրենքի 63-րդ հոդվածի 2-րդ կետում նշվում է, որ շահագրգռվածության առկայությամբ Ընկերության ցանկացած գործարք ներկայացվում է Ընկերության տարեկան հաշվետվության մեջ՝ բացահայտելով ամբողջական և համապարփակ տեղեկատվություն գործարքի կողմերի, պայմանների, շահագրգռվածության բնույթի ու շրջանակների վերաբերյալ և կցելով անկախ գնահատողի եզրակացությունը շուկայական արժեքին գործարքի համապատասխանության վերաբերյալ: Բացի այդ, Օրենքի 59-րդ հոդվածի 4-րդ կետում հստակ ամրագրված է, որ անկախ գնահատողի կողմից գույքի շուկայական արժեքի սահմանումը պարտադիր է Օրենքի 58-րդ հոդվածով սահմանված՝ Ընկերության բաժնետերերին պատկանող բաժնետոմսերի հետգնման, ինչպես նաև 64-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան գործարք կնքելու դեպքերում: Քանի որ քննարկվող դեպքում գործարքը համապատասխանում էր 64-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին, ուստի անկախ գնահատողի եզրակացությունը պարտադիր էր: Այսպիսով, Ընկերության տնօրենի պնդումն առ այն, որ անշարժ գույքն իր հաշվեկշռային արժեքից ավելի բարձր արժեքով է վաճառվել, ուստի անկախ գնահատողի եզրակացության կարիք չկար, իրավաչափ չէ:

Պատասխան /հարց 2 /2 միավոր/

Ժողովի իրավասությունների շրջանակը սահմանվում է Օրենքի 67-րդ հոդվածով: Նշված հոդվածի 1-ին կետում թվարկված են ժողովի իրավասությանը պատկանող հարցերը, որոնցից «ժը» և «ժթ» ենթակետերը վերաբերում են Օրենքով նախատեսված դեպքերում խոշոր և շահագրգռվածության առկայությամբ գործարքների հաստատմանը:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Օրենքի 67-րդ հոդվածի 3-րդ կետով ամրագրված է, որ ժողովն իրավունք չունի քննարկել և որոշումներ ընդունել այն հարցերի շուրջ, որոնք Օրենքով չեն սահմանվել որպես նրա իրավասություն: Փաստացի ժողովը չունի անշարժ գույքի վաճառքի գործարքը չեղարկելու համապատասխան իրավասություն, ուստի Օրենքի 65-րդ հոդվածի 6-րդ կետի հիմքով կարող է որոշում ընդունել՝ դատական կարգով չեղարկել (անվավեր ճանաչել) նշված գործարքը: Ընկերության բաժնետերերից յուրաքանչյուրն իր հերթին ևս իրավունք ունի պահանջել նշված գործարքը չեղարկել (անվավեր ճանաչել):

Ինչ վերաբերում է, թե քվեարկությամբ ինչ որոշում կայացվեց, ապա այս մասով պետք է նկատի ունենալ, որ քանզի որոշմանը կողմ էին քվեարկել Նորիկ Կիրակոսյանը և Վիգեն Նիկողոսյանը, իսկ վերջինս նաև հանդիսանում էր Ազատ Եղիազարյանի ներկայացուցիչը, ապա փաստացի ստացվում է, որ հարցին կողմ է քվեարկել բաժնետերերի 55.5 տոկոսը (90 բաժնետոմսից 50-ը), ինչը քվեարկության իրավունք ունեցողների պարզ մեծամասնությունն է, և վերջինս բավարար է տվյալ հարցի վերաբերյալ որոշում կայացնելու՝ գործարքը դատական կարգով չեղարկելու (անվավեր ճանաչելու) համար:

Պատասխան /հարց 3 /5 միավոր/

Օրենքի 83-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված է, որ խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք Օրենքով և կանոնադրությամբ վերապահված են ժողովի բացառիկ իրավասությանը: Խորհուրդը պետք է ստեղծվի 50 եւ ավելի բաժնետեր ունեցող Ընկերությունում: Մինչև 50 բաժնետեր ունեցող Ընկերությունում խորհուրդ չստեղծվելու դեպքում, նրա իրավասություններն իրականացնում է ժողովը: Այդ դեպքում կանոնադրությունը պետք է դրույթներ պարունակի այն անձի կամ Ընկերության այն մարմնի մասին, որն իրավունք ունի որոշումներ ընդունել Օրենքի 84-րդ հոդվածի 1-ին կետի «բ-դ» ենթակետերով սահմանված հարցերի վերաբերյալ:

Հետևապես Արմեն Արարատյանի այն պնդումը, որ որպես բաժնետիրական ընկերություն, իրենք պարտավոր են ունենալ խորհուրդ, չի բխում օրենսդրության պահանջներից: Խորհրդի առկայությունն օրենսդրորեն պարտադիր է, եթե բաժնետերերի քանակը 50 և ավելի է: Տվյալ դեպքում 5 բաժնետեր է, ուստի ըստ Օրենքի, Ընկերությունը կարող է խորհուրդ չունենալ և տվյալ դեպքում խորհրդի՝ Օրենքով վերապահված իրավասությունները կփոխանցվեն ժողովին:

Վիգեն Նիկողոսյանի առաջարկն Օրենքի սահմաններում էր: Միայն թե այստեղ պետք է նկատի ունենալ, որ եթե Ընկերության կանոնադրությամբ նախատեսված է խորհրդի ձևավորումը, ապա ժողովը կարող է որոշում կայացնել խորհրդի լուծարման վերաբերյալ միայն այն դեպքում, երբ կանոնադրության մեջ կատարի համապատասխան փոփոխություններ եւ դրանք ներկայացնի ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ պետական գրանցման նպատակով:

Նորիկ Կիրակոսյանի պահանջը՝ որպես Ընկերության բաժնետեր խորհրդի կազմում առանց քվեարկության ընդգրկվելու վերաբերյալ, չի բխում Օրենքի դրույթներից: Օրենքի 85-րդ հոդվածի 2-րդ կետը նշում է, որ Ընկերության այն բաժնետերերը, որոնք ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվել խորհրդի կազմում կամ դրանում նշանակել իրենց ներկայացուցիչին: Այսինքն՝ առանց ընտրության խորհրդի կազմում կարող են ընդգրկվել միայն այն բաժնետերերը կամ իրենց ներկայացուցիչները, ովքեր ունեն 10 եւ ավելի տոկոս բաժնեչափ: Նորիկ Կիրակոսյանն ունի 10 տոկոսից պակաս բաժնեչափ (8 բաժնետոմս 90-ից, որը կազմում է շուրջ 9 տոկոս բաժնեչափ), ուստի չի կարող առանց ընտրության ընդգրկվել խորհրդի կազմում:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք

Հոդված 59. Ընկերության գույքի շուկայական արժեքի որոշման կարգը

1. Գույքի շուկայական արժեք է համարվում, ներառյալ՝ Ընկերության բաժնետոմսերի եւ այլ արժեթղթերի արժեքը, այն գինը, որով գույքի արժեքի մասին բոլոր անհրաժեշտ տեղեկություններ ունեցող եւ այն վաճառելու պարտավորություն չունեցող վաճառողը կհամաձայնեի վաճառել այդ գույքը, իսկ գույքի արժեքի մասին բոլոր անհրաժեշտ տեղեկություններ ունեցող եւ այն ձեռք բերելու պարտավորություն չունեցող գնորդը կհամաձայնեի այդ գույքը ձեռք բերել:

2. Գույքի շուկայական արժեքը սահմանվում է խորհրդի որոշմամբ, բացառությամբ՝

ա) Ընկերության բնականոն գործունեության հետ կապված այն դեպքերի, երբ գործարքը կնքվում է Ընկերության ծախսերի եւ եկամուտների նախահաշվի շրջանակներում:

բ) սույն օրենքով սահմանված դեպքերի, երբ շուկայական արժեքը որոշվում է դատարանի, այլ մարմնի կամ անձի կողմից:

Եթե մեկ կամ մի քանի գործարքներում, որոնց համար պահանջվում է սահմանել գույքի շուկայական արժեք, շահագրգիռ անձ է հանդիսանում խորհրդի անդամը, ապա գույքի շուկայական արժեքը սահմանվում է խորհրդի այն անդամների որոշմամբ, որոնք չունեն շահագրգռվածություն նշված գործարքում: Հիսուն և ավելի բաժնետեր (քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր) ունեցող Ընկերությունում գույքի շուկայական արժեքը որոշվում է խորհրդի՝ գործարքի կնքմամբ շահագրգռվածություն չունեցող, անկախ անդամների կողմից:

3. Գույքի շուկայական արժեքի սահմանման համար՝ անկախ գնահատողի ծառայություններից Ընկերությունը կարող է օգտվել խորհրդի որոշմամբ:

4. Անկախ գնահատողի կողմից գույքի շուկայական արժեքի սահմանումը պարտադիր է սույն օրենքի 58-րդ հոդվածով սահմանված՝ Ընկերության բաժնետերերին պատկանող բաժնետոմսերի հետգնման, ինչպես նաեւ 64-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան գործարք կնքելու դեպքերում:

5. Ընկերության բաժնետոմսերի կամ այլ արժեթղթերի շուկայական արժեքի որոշման անհրաժեշտության դեպքում հաշվի են առնվում այդ բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաեւ առաջարկի եւ պահանջարկի գներին վերաբերող եւ համապատասխան զանգվածային լրատվության միջոցներում պարբերաբար հրապարակվող տեղեկությունները:

Ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսերի շուկայական արժեքի որոշման դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել Ընկերության զուտ ակտիվների արժեքը, ինչպես նաեւ այն գինը, որն Ընկերության բոլոր տեղաբաշխված հասարակ (սովորական) արժեթղթերի համար համաձայն է վճարել Ընկերության գույքի մասին լրիվ տեղեկություններ ունեցող գնորդը, ինչպես նաեւ այլ գործոններ, որոնք Ընկերության գույքի շուկայական արժեքը սահմանող մարմինը (անձը) կհամարի կարեւոր:

Սույն կետով որոշվող հասարակ (սովորական) բաժնետոմսերի շուկայական արժեքը չի կարող պակաս լինել այն գնից, որը հաշվարկվել է Ընկերության գուտ ակտիվների արժեքը հիմք ընդունելով:

Հոդված 62. Ընկերության գործարքներում շահագրգռվածությունը

1. Ընկերության գործարքներում շահագրգիռ անձ է համարվում Ընկերության փոխկապակցված անձը, որը՝

ա) հանդիսանում է գործարքի կողմ կամ մասնակցում է գործարքին որպես միջնորդ կամ ներկայացուցիչ.

բ) գործարքի կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ հանդիսացող անձին փոխկապակցված անձ է:

2. Սույն օրենքի իմաստով փոխկապակցված են համարվում Ընկերության խորհրդի անդամները, գործադիր մարմնի անդամները, գործադիր մարմնի իրավասություններ իրականացնող իրավաբանական անձը կամ դրա տնօրենը կամ դրա խորհրդի անդամները կամ դրա կանոնադրությամբ կամ պայմանագրով նախատեսված՝ ղեկավարման գործառույթներ իրականացնող այլ անձինք, վերստուգող հանձնաժողովի անդամները (վերստուգողը), Ընկերության անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձինք եւ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով փոխկապակցված ճանաչվող այլ անձինք:

Հոդված 63. Ընկերության գործարքներում շահագրգռվածության վերաբերյալ տեղեկատվությունը

1. Ընկերության փոխկապակցված անձինք պարտավոր են Ընկերության գործադիր մարմնին կամ կանոնադրությամբ սահմանված այլ մարմնի տրամադրել տեղեկատվություն՝

ա) այն մասին, որ իրենք հանդիսանում են գործարքի կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ՝ բացահայտելով փոխկապակցվածությանն առնչվող հանգամանքները՝ մինչեւ գործարքը կնքելը.

բ) կնքված կամ կնքման նախատեսված իրենց հայտնի գործարքների մասին, որոնցում իրենք կարող են համարվել շահագրգիռ անձ՝ սույն կետով նախատեսված տեղեկատվությունն իրենց հայտնի դառնալուց հետո՝ եռօրյա ժամկետում:

2. Շահագրգռվածության առկայությամբ Ընկերության ցանկացած գործարք ներկայացվում է Ընկերության տարեկան հաշվետվության մեջ՝ բացահայտելով ամբողջական եւ համապարփակ տեղեկատվություն գործարքի կողմերի, պայմանների, շահագրգռվածության բնույթի ու շրջանակների վերաբերյալ եւ կցելով անկախ

գնահատողի եզրակացությունը շուկայական արժեքին գործարքի համապատասխանության վերաբերյալ:

3. Ընկերության գործադիր մարմինը կամ կանոնադրությամբ նախատեսված այլ մարմին պարտավոր է սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված տեղեկությունների հիման վրա վարել Ընկերության փոխկապակցված անձանց ռեեստր:

Հոդված 64. Շահագրգռվածության առկայության դեպքում ընկերության գործարքների կնքման կարգը

1. Մինչեւ 500 բաժնետեր (քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր) ունեցող Ընկերությունում որոշումը գործարքը կնքելու մասին, որում առկա է շահագրգռվածությունը, ընդունում է խորհուրդը՝ գործարքը կնքելու մեջ շահագրգռվածություն չունեցող խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ:

2. 500 եւ ավելի բաժնետեր (քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր) ունեցող Ընկերությունում որոշումը գործարքը կնքելու մասին, որում առկա է շահագրգռվածությունը, ընդունում է խորհուրդը՝ գործարքը կնքելու մեջ շահագրգռվածություն չունեցող, խորհրդի անկախ անդամների ձայների մեծամասնությամբ:

Խորհուրդը շահագրգռվածության առկայությամբ գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու համար պետք է գա այն եզրակացության, որ՝

- գործարքը կնքելու հետեւանքով Ընկերության կողմից ստացված վճարը պակաս չէ գործարքի արդյունքում Ընկերության կողմից գործարքի մյուս կողմին փոխանցվող գույքի, տրամադրված ծառայության կամ կատարված աշխատանքի՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքից, կամ՝

- գործարքը կնքելու հետեւանքով Ընկերության ձեռք բերված գույքի, ստացված ծառայության կամ Ընկերության համար կատարված աշխատանքի դիմաց վճարը չի գերազանցում նշված գույքի, ծառայության կամ աշխատանքի՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքը:

3. Որոշումը գործարքը կնքելու մասին, որում առկա է շահագրգռվածությունը, ընդունվում է ժողովի կողմից քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր եւ գործարքի կատարման մեջ շահագրգռվածություն չունեցող բաժնետերերի ձայների մեծամասնությամբ, եթե՝

ա) գործարքով վճարման ենթակա գումարը կամ գործարքի առարկա հանդիսացող գույքի՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքը հավասար է Ընկերության ակտիվների արժեքի առնվազն 10 տոկոսին.

բ) գործարքը եւ/կամ մի շարք փոխկապակցված գործարքներ կնքվում են Ընկերության քվեարկող բաժնետոմսերի կամ քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող Ընկերության այլ

արժեթղթերի տեղաբաշխման նպատակով, և որոնց քանակն ավելի է Ընկերության՝ արդեն տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի քանակի 2 տոկոսից:

Ընկերության կանոնադրությամբ սույն մասով նախատեսված որոշման ընդունման համար կարող է սահմանվել ձայների առավել մեծ քանակ:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված հատկանիշներին համապատասխանող գործարքը կարող է կնքվել խորհրդի որոշմամբ, եթե այդ գործարքն Ընկերությանը տրամադրվող փոխառություն է:

5. Եթե խորհրդի բոլոր անդամները շահագրգիռ անձինք են ճանաչվել, ապա գործարքը կնքելու մասին որոշումն ընդունում է ժողովը՝ գործարքում շահագրգռվածություն չունեցող բաժնետերերի ձայների մեծամասնությամբ, եթե Ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ:

6. Եթե գործարքը, որում առկա է շահագրգռվածությունը, միեւնույն ժամանակ Ընկերության գույքի օտարման կամ ձեռքբերման խոշոր գործարք է հանդիսանում, ապա դրա կնքումն իրականացվում է՝ հաշվի առնելով նաեւ սույն օրենքի VIII գլխի դրույթները:

Հոդված 65. Շահագրգռվածության առկայությամբ գործարքների հետեւանքները

1. Գործարքում շահագրգիռ ճանաչված անձն Ընկերության առջեւ պատասխանատվություն է կրում սույն օրենքի խախտմամբ կնքված շահագրգռվածության առկայությամբ գործարքի հետեւանքով Ընկերությանը պատճառված վնասների չափով:

Գործարքում շահագրգիռ ճանաչված անձը պարտավոր է նաեւ Ընկերությանը վերադարձնել ցանկացած շահույթ, որ ստացել է սույն օրենքի խախտմամբ կնքված շահագրգռվածության առկայությամբ գործարքներից:

Սույն օրենքի 63-րդ հոդվածի պահանջները խախտող անձինք պատասխանատվություն են կրում խախտման հետեւանքով Ընկերությանը կամ այլ անձանց պատճառված վնասի համար: 2. Եթե պատասխանատվության ենթակա է մի քանի անձ, ապա նրանք Ընկերության եւ այլ շահագրգիռ անձանց առջեւ կրում են համապարտ պատասխանատվություն:

3. Շահագրգռվածության առկայության դեպքում Ընկերության գործարքների կնքման վերաբերյալ սույն գլխի պահանջները չեն կիրառվում, եթե՝

ա) բոլոր բաժնետերերի կողմից իրականացվում է բաժնետոմսերի ձեռքբերման

նախապատվության իրավունքը.

բ) իրականացվում է բաժնետոմսերի փոխարկվող այլ արժեթղթերի փոխարկումը.

գ) տեղաբաշխված բաժնետոմսերն Ընկերության կողմից ձեռք բերելու դեպքում, եթե տվյալ տեսակի (դասի) բաժնետոմսերի բոլոր սեփականատերերն ունեն հավասար իրավունք՝ համամասնորեն վաճառելու իրենց պատկանող տվյալ տեսակի (դասի) բաժնետոմսերը:

4. Եթե Ընկերության՝ ծայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր կամ անվանատեր է հանդիսանում միայն մեկ անձ, ապա շահագրգռվածության առկայության դեպքում սույն գլխի պահանջները չեն կիրառվում:

5. Փակ Ընկերության (որի ծայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի քանակը չի գերազանցում 10-ը) կանոնադրությունը կարող է նախատեսել դրույթներ՝ սույն գլխի նորմերի պահանջները մասնակի կամ ամբողջությամբ չկիրառելու մասին:

6. Ընկերության բաժնետերերն իրավունք ունեն պահանջելու՝

- անվավեր ճանաչել սույն օրենքի խախտմամբ կնքված շահագրգռվածության առկայությամբ գործարքը,

- գործարքում շահագրգիռ ճանաչված անձանց կողմից գործարքի հետեւանքով պատճառված վնասի հատուցում,

- գործարքից ստացված շահույթի վերադարձ Ընկերությանը:

7. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից շահագրգռվածության առկայությամբ կնքված գործարքի հաստատումը գործարքում խախտում կատարած անձին չի ազատում սույն օրենքի խախտմամբ կնքված գործարքի հետեւանքով Ընկերությանը կամ բաժնետերերին պատճառված վնասը հատուցելու պարտականությունից:

Հոդված 67. Ժողովի իրավասությունները

1. Ժողովի իրավասությանն են պատկանում՝

ա) կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների եւ լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.

բ) Ընկերության վերակազմակերպումը.

գ) Ընկերության լուծարումը.

դ) ամփոփ, միջանկյալ եւ լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային

հանձնաժողովի նշանակումը.

ե) խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը եւ նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման եւ դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

զ) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.

է) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացումը.

ը) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաեւ Ընկերության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը.

թ) Ընկերության գործադիր մարմնի (միանձնյա կամ կոլեգիալ) ձեւավորումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, եթե կանոնադրությամբ այդ իրավունքը վերապահված չէ խորհրդին.

ժ) Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը եւ նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

ժա) Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

ժբ) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների եւ վնասների հաշվի, շահույթների եւ վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը եւ տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը: Նշված հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Եթե սահմանված ժամկետում տարեկան ժողովը տեղի չի ունեցել, ապա արտահերթ ժողով կարող է հրավիրվել միայն Ընկերության լուծարման կամ սույն ենթակետում նշված հարցերը քննարկելու համար: Նշված հարցերով հրավիրված արտահերթ ժողովում այլ հարցեր քննարկվել չեն կարող, բացառությամբ սույն ենթակետում նշված հարցերով կայացված որոշումներով պայմանավորված կանոնադրական կապիտալի նվազեցման դեպքերի.

ժգ) սույն օրենքի 47-րդ հոդվածի 3-րդ կետի համապատասխան Ընկերության բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող Ընկերության այլ արժեթղթերի Ընկերության բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը.

ժդ) ժողովի վարման կարգը.

ժե) հաշվիչ հանձնաժողովի ձեւավորումը.

ժզ) Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձեւի որոշումը, ներառյալ՝ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաեւ հրապարակային հայտարարության ձեւով.

ժէ) բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան), բաժանումը.

ժը) գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ սույն օրենքի 64-րդ հոդվածով նախատեսված դեպքերում.

ժթ) գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ սույն օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերում.

ի) Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը եւ հետզնումը՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում.

իա) Ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց (խորհրդի նախագահի կամ անդամի, տնօրենի, գլխավոր տնօրենի կամ վարչության, տնօրինության անդամի) աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը.

իբ) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը.

իգ) դուստր եւ կախյալ ընկերություններին մասնակցությունը.

իդ) հոլդինգային ընկերությունների, առետրային կազմակերպությունների այլ

միությունների հիմնադրումը.

իե) հոլդինգային ընկերություններում, առետրային կազմակերպությունների այլ

միություններում մասնակցությունը.

իզ) սույն օրենքով եւ կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը.

իէ) «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում և կարգով որոշումների ընդունումը:

Ժողովի՝ «իբ-իե» ենթակետերով սահմանված իրավասություններն իրականացվում են, եթե դրանք կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ վերապահված չեն խորհրդին:

2. Սույն հոդվածի 1-ին կետով սահմանված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է ժողովի բացառիկ իրավասությանը եւ չի կարող փոխանցվել խորհրդին կամ գործադիր մարմնին, բացառությամբ սույն կետի երկրորդ մասով սահմանված հարցերի:

Ժողովի որոշմամբ սույն հոդվածի 1-ին կետի «իզ» եւ «իե» ենթակետերով սահմանված հարցերով որոշումների ընդունումը կարող է փոխանցվել Ընկերության գործադիր մարմնին, իսկ «է», «թ», «ի» եւ «իբ-իե» ենթակետերով սահմանված հարցերով՝ խորհրդին:

3. Ժողովն իրավունք չունի քննարկել եւ որոշումներ ընդունել այն հարցերի շուրջ, որոնք սույն օրենքով չեն սահմանվել որպես նրա իրավասություն:

Հոդված 76. Բաժնետիրոջ մասնակցության կարգը ժողովում

1. Ընկերության բաժնետերը ժողովում մասնակցելու իր իրավունքը կարող է իրականացնել անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով:

Բաժնետերն իրավունք ունի ցանկացած ժամանակ փոխել իր լիազոր ներկայացուցչին կամ անձամբ մասնակցել ժողովին:

Ժողովում բաժնետիրոջ ներկայացուցիչը գործում է Օրենսգրքի, օրենքի կամ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերի, ինչպես նաեւ գրավոր ձեռով կազմված լիազորագրի հիման վրա: Լիազորագիրը պետք է պարունակի տեղեկություններ բաժնետիրոջ եւ նրա ներկայացուցչի մասին (անունը կամ անվանումը, բնակության կամ գտնվելու վայրը, անձնագրային կամ պետական գրանցման տվյալները): Լիազորագրերը պետք է ձեւակերպված լինեն Օրենսգրքով, այլ օրենքներով եւ իրավական ակտերով սահմանված կարգով:

Բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի յոթերորդ պարբերությամբ նախատեսված դեպքի, բաժնետիրոջ ներկայացուցիչը կարող է մասնակցել ժողովում միայն լիազորագրի առկայության դեպքում:

Նույն բաժնետիրոջ կողմից տրված երկու եւ ավելի լիազորագրերի առկայության դեպքում ուժի մեջ է համարվում վերջին լիազորագիրը:

Ընկերության բաժնետեր հանդիսացող իրավաբանական անձանց ղեկավարները ժողովին ներկայանում են առանց լիազորագրի:

Ընկերության բաժնետոմսերի անվանատիրոջ կողմից բաժնետիրոջ (բաժնետերերի) անունից ժողովին մասնակցելու համար լիազորագիր չի պահանջվում, եւ անվանատիրոջ լիազորությունները հավաստվում են սույն օրենքի 96.1-ին հոդվածով սահմանված կարգով:

2. Եթե Ընկերության բաժնետոմսերը փոխանցվել են ժողովում մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվանից, ամսից, ամսաթվից հետո, բայց մինչև ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ապա նշված ցուցակում ընդգրկված բաժնետերը պարտավոր է իրենից բաժնետոմսեր ձեռք բերած անձանց տրամադրել քվեարկելու լիազորագիր կամ ժողովում քվեարկել բաժնետոմսերի նոր սեփականատիրոջ ցուցումներին համաձայն: Նշված կարգը կիրառվում է նաև բաժնետոմսի յուրաքանչյուր հաջորդ փոխանցումների ժամանակ:

Հոդված 77. Ժողովի քվորումը

1. Ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին:

Եթե ժողովը տեսում է մեկ օրից ավելի, ապա յուրաքանչյուր օրվա համար իրականացվում է ժողովի մասնակիցների գրանցում:

2. Եթե Ընկերության բաժնետերերին սույն օրենքով սահմանված կարգով քվեաթերթիկներ են ուղարկվել, ապա քվորումի հաշվարկման եւ քվեարկության արդյունքների ամփոփման համար Ընկերության կողմից հաշվի են առնվում նաև մինչև ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին ստացված քվեաթերթիկներով տրամադրվող ձայները:

3. Քվորումի բացակայության դեպքում հայտարարվում է նոր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը: Նոր ժողովի գումարման դեպքում օրակարգի փոփոխություն չի թույլատրվում:

Չկայացած ժողովի փոխարեն գումարվող նոր ժողովն իրավասու է, եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 30-ից ավելի տոկոսին:

Ընկերության բաժնետերերի ծանուցումը նոր ժողովի գումարման մասին կատարվում է սույն օրենքի 71-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով, իսկ սույն օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում՝ ժողովի գումարման օրվանից առնվազն 10 օր առաջ:

Եթե քվորումի բացակայության պատճառով չկայացած ժողովի գումարման ամսաթիվը տեղափոխվում է 20 օրից պակաս ժամկետով, ապա այդ ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի նոր ցուցակ չի կազմվում:

Հոդված 78. Քվեարկությունը ժողովում

Քվեարկությունը ժողովում իրականացվում է «Ընկերության մեկ քվեարկող բաժնետոմս՝ մեկ ձայն» սկզբունքով, բացառությամբ խորհրդի անդամների ընտրության եւ սույն օրենքով նախատեսված այլ դեպքերի, երբ կիրառվում է գումարային (կումուլյատիվ) քվեարկության սկզբունքը:

«Ընկերության մեկ քվեարկող բաժնետոմս՝ մեկ ձայն» սկզբունքը կիրառելիս արտոնյալ բաժնետոմսերի տված ձայների քանակի հաշվարկն իրականացվում է սույն օրենքի 68-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով:

Հոդված 83. Խորհուրդը

1. Խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք սույն օրենքով եւ կանոնադրությամբ վերապահված են

ժողովի բացառիկ իրավասությանը:

Խորհուրդը պետք է ստեղծվի 50 եւ ավելի բաժնետեր ունեցող Ընկերությունում: Մինչեւ 50 բաժնետեր ունեցող Ընկերությունում խորհուրդը չստեղծվելու դեպքում, նրա

իրավասություններն իրականացնում է ժողովը: Այդ դեպքում կանոնադրությունը պետք է դրույթներ պարունակի այն անձի կամ Ընկերության այն մարմնի մասին, որն իրավունք ունի որոշումներ ընդունել սույն օրենքի 84-րդ հոդվածի 1-ին կետի «բ-դ» ենթակետերով սահմանված հարցերի վերաբերյալ:

2. Ժողովի որոշմամբ խորհրդի անդամների համար կարող է սահմանվել պարզեւավճար եւ (կամ) փոխհատուցում նրանց այն ծախսերի դիմաց, որոնք կապված են խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ: Պարզեւավճարի եւ (կամ) փոխհատուցման չափը և վճարման կարգը սահմանվում են ժողովի որոշմամբ:

3. Ընկերությունը վարում է խորհրդի անդամների ռեեստր, որը բաց է Ընկերության բաժնետերերի ծանոթացման համար եւ խորհրդի անդամների մասին պարունակում է հետեւյալ տվյալները՝

ա) անունը և ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը.

բ) աշխատանքի և (կամ) բնակության վայրն ու հեռախոսահամարը.

գ) զբաղմունքը, մասնագիտությունը և կրթությունը.

դ) խորհրդի կազմում ընտրվելու տարին, ամիսը, ամսաթիվը եւ խորհրդի անդամությունից ազատվելու տարին, ամիսը, ամսաթիվը (եթե դա տեղի է ունեցել).

ե) քանի անգամ է վերընտրվել խորհրդի կազմում.

զ) Ընկերության քվեարկող բաժնետոմսերի քանակը, որը պատկանում է Ընկերության բաժնետեր հանդիսացող խորհրդի անդամին.

է) տեղեկություններ այլ իրավաբանական անձի մասին, որում նշված անձն զբաղեցնում է ղեկավար (խորհրդի նախագահ կամ անդամ, տնօրեն, գլխավոր տնօրեն կամ վարչության, տնօրինության անդամ եւ այլն) կամ այլ պաշտոն, այդ պաշտոնում նրա իրավունքներն ու պարտականությունները, եթե տեղեկությունների տրամադրումով չեն խախտվում «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները, ինչպես նաեւ տեղեկություններ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հիմքերով այդ իրավաբանական անձի հետ փոխկապակցվածության մասին.

ը) կանոնադրությամբ կամ խորհրդի կանոնակարգով նախատեսված այլ տվյալներ:

Հոդված 84. Խորհրդի իրավասությունները

1. Խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

ա) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը.

բ) տարեկան եւ արտահերթ ժողովների գումարումը, բացառությամբ սույն օրենքի 74-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված դեպքերի.

գ) ժողովների օրակարգի հաստատումը.

դ) ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաեւ բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են խորհրդի իրավասությանը՝ սույն օրենքի X գլխի դրույթներին համապատասխան.

ե) սույն օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «բ», «ժգ», «ժզ», «ժէ-ի» ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումը ժողովների քննարկմանը.

զ) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի ավելացումը, եթե կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ նրան տրված են այդպիսի լիազորություններ.

է) պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը, եթե կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ.

ը) գույքի շուկայական արժեքի որոշումը՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով.

թ) սույն օրենքով նախատեսված դեպքերում Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի եւ այլ արժեթղթերի ձեռքբերումը.

ժ) Ընկերության գործադիր մարմնի ձեւավորումը, դրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, տնօրենի (գլխավոր տնօրենի), վարչության, տնօրինության անդամների վարձատրության եւ ծախսերի փոխհատուցումների վճարման կարգն ու պայմանները, եթե կանոնադրությամբ այդ իրավունքները վերապահված են խորհրդին.

ժ.1) խորհրդին կից հանձնաժողովների (հանձնախմբերի) ձեւավորումը, այդ թվում՝ աուդիտի.

ժա) Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) վարձատրության եւ ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի եւ պայմանների վերաբերյալ ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը.

ժբ) Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը.

ժգ) Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի եւ վճարման կարգի վերաբերյալ ժողովին առաջարկությունների նախապատրաստումը.

ժդ) Ընկերության բաժնետոմսերով միջանկյալ (եռամսյակային կամ կիսամսյակային) շահութաբաժինների չափի եւ վճարման կարգի սահմանումը.

ժե) Ընկերության պահուստային եւ այլ հիմնադրամների օգտագործումը.

ժզ) Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը.

ժէ) դուստր և կախյալ ընկերությունների ստեղծումը, այդ Ընկերություններին մասնակցությունը, եթե կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ այդ իրավասությունը վերապահված է խորհրդին եւ, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում.

ժը) Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը.

ժթ) այլ կազմակերպություններին մասնակցելը, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում.

ի) Ընկերության գույքի օտարման եւ ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը՝ սույն օրենքի VIII գլխում նախատեսված դեպքերում.

իա) սույն օրենքի IX գլխով նախատեսված գործարքների կնքումը.

իբ) Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.

իգ) ամենամյա ծախսերի նախահաշվի եւ դրա կատարողականի հաստատումը. իդ) Ընկերության հաստիքացուցակի հաստատումը.

իե) սույն օրենքով եւ կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

2. Խորհրդի բացառիկ իրավասության ենթակա հարցերը չեն կարող փոխանցվել

Ընկերության գործադիր մարմնի լուծմանը:

Սույն օրենքի 83-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ մասով նախատեսված դեպքում խորհրդի

բացառիկ իրավասություն հանդիսացող հարցերը ենթակա են ժողովի իրավասությանը, բացառությամբ սույն հոդվածի 1-ին կետի «գ», «թ», «ժգ», «իբ-իդ» ենթակետերով նախատեսված հարցերի, որոնք կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ կարող են փոխանցվել Ընկերության գործադիր մարմնի լուծմանը:

Հոդված 85. Խորհրդի ընտրությունները

1. Խորհրդի անդամներն ընտրվում են տարեկան ժողովի կամ անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում արտահերթ ժողովի կողմից՝ սույն օրենքով եւ կանոնադրությամբ սահմանված կարգով: Խորհրդի անդամների լիազորությունները դադարում են խորհրդի հաջորդ կազմի ընտրվելուց հետո:

Խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տեւողությունը չի սահմանափակվում: Ժողովը կարող է որոշում ընդունել խորհրդի ցանկացած անդամի (բոլոր անդամների) լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

Եթե խորհրդի անդամներն ընտրված են գումարային (կումուլյատիվ) քվեարկությամբ, ապա ժողովի՝ լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումը կարող է ընդունվել միայն խորհրդի բոլոր անդամների վերաբերյալ:

2. Ընկերության այն բաժնետերերը, որոնք ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 եւ ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվել խորհրդի կազմում կամ դրանում նշանակել իրենց ներկայացուցչին: Այդ իրավունքը վերապահվում է նաեւ անվանատերերին:

Յուրաքանչյուր բաժնետեր խորհրդում կարող է զբաղեցնել միայն մեկ տեղ:

3. Խորհրդի ընտրությունները 500 եւ ավելի բաժնետեր (քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր) ունեցող Ընկերությունում իրականացվում են գումարային (կումուլյատիվ) քվեարկությամբ:

Մինչեւ 500 բաժնետեր (քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր) ունեցող Ընկերությունում խորհրդի ընտրությունները կարող են իրականացվել գումարային (կումուլյատիվ) քվեարկությամբ, եթե դա նախատեսված է կանոնադրությամբ:

Գումարային (կումուլյատիվ) քվեարկության ժամանակ յուրաքանչյուր քվեարկող բաժնետոմս ունի խորհրդի ընտրվող (վերընտրվող) անդամների քանակին հավասար ձայների քանակ:

Բաժնետերը քվեարկության ընթացքում իրավունք ունի ձայները տրամադրել մեկ թեկնածուին կամ բաշխել մի քանի թեկնածուների միջև:

Խորհրդի կազմում ընտրված են համարվում ձայների առավելագույն քանակ ստացած թեկնածուները:

4. Խորհրդի քանակական կազմը սահմանվում է ժողովի որոշմամբ, բայց չի կարող երեք անդամից պակաս լինել:

Սույն կետով սահմանված սահմանափակումը չի տարածվում այն անձանց վրա, որոնք սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան իրավունք ունեն ընդգրկվել խորհրդի կազմում առանց ընտրության:

5. Խորհրդի անդամ կարող է լինել Ընկերության բաժնետեր չհանդիսացող անձը, եթե կանոնադրությամբ դա արգելված չէ:

Բաց ընկերություններում խորհրդի անդամների առնվազն մեկ երրորդը պետք է լինի անկախ: Եթե մեկ երրորդը բնական թիվ չէ, ապա խորհրդի անկախ անդամների թիվ է համարվում մեկ երրորդին առավել մոտ ամբողջ թիվը:

Խորհրդի անկախ անդամ կարող է ընտրվել այն անձը, որը՝

ա) վերջին երեք տարվա ընթացքում ընկերությունում գործադիր ղեկավար պաշտոն չի զբաղեցրել, չի աշխատել ընկերությունում կամ դրա հետ փոխկապակցված այլ անձի մոտ.

բ) վերջին երեք տարվա ընթացքում ընկերությունից կամ ընկերության հետ փոխկապակցված անձից (անձանցից) ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի ստացել որեւէ վարձատրություն, բացառությամբ որպես խորհրդի անդամ ստացած վարձատրության.

գ) վերջին երեք տարվա ընթացքում ինչպես ուղղակիորեն, այնպես էլ անուղղակիորեն՝ որպես գործընկեր, նշանակալից բաժնետեր, խորհրդի անդամ, գործադիր մարմնի անդամ (ներկայացուցիչ) չի ունեցել էական որեւէ գործարար հարաբերություն ընկերության եւ (կամ) ընկերության հետ փոխկապակցված անձի (անձանց) հետ.

դ) վերջին հինգ տարվա ընթացքում չի հանդիսացել ընկերության արտաքին աուդիտս իրականացնող անձի եւ (կամ) դրա հետ փոխկապակցված անձի (անձանց) բաժնետեր եւ (կամ) աշխատող.

ե) վերջին 10 տարվա ընթացքում 6 տարուց ավելի չի հանդիսացել ընկերության խորհրդի անդամ.

զ) չի հանդիսանում ընկերության նշանակալից բաժնետեր.

է) վերջին մեկ տարվա ընթացքում անմիջական հսկողություն չի իրականացրել ընկերության նկատմամբ՝ որպես հանրային ծառայող.

ը) չի հանդիսանում սույն մասի «ա-է» կետերում նշված անձանցից որեւէ մեկի ընտանիքի անդամ:

Սույն մասի «գ» կետի իմաստով նշանակալից է համարվում ընկերության 10-ից ավելի տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերը:

Խորհրդի անկախ անդամին վերաբերող սահմանափակումները գործում են նաեւ խորհրդի անկախ անդամի պարտականությունները կատարելու ժամանակահատվածում: Ընկերության գործադիր մարմնի ներկայացուցիչները չեն կարող խորհրդում մեծամասնություն կազմել:

Խորհրդի անդամների նկատմամբ կանոնադրությամբ կամ ժողովի հաստատած խորհրդի կանոնակարգով կարող են նախատեսվել նաեւ այլ սահմանափակումներ եւ պահանջներ:

ԽՆԴԻՐ 3

Հարց 1 Փաստտորեն, կողմերի միջև ծագել են փոխառության պայմանագրից բխող իրավահարաբերություններ: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգրքը) 877-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն. «1. Փոխառության պայմանագրով մեկ կողմը (փոխատուն) մյուս կողմի (փոխառուի) սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխատուին վերադարձնել միևնույն գումարի դրամ (փոխառության գումարը) կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք: Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրամ կամ այլ գույք հանձնելու պահից:»:

Օրենսգրքի 878-րդ հոդվածի համաձայն. «1. Փոխառության պայմանագիրը կնքվում է գրավոր: 2. Ի հավաստումն փոխառության պայմանագրի և դրա պայմանների՝ կարող է ներկայացվել փոխառուի տված ստացականը կամ փոխատուի կողմից փոխառուին որոշակի դրամական գումար կամ որոշակի քանակի գույք տալը հավաստող այլ փաստաթուղթ: 3. Գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է փոխառության պայմանագրի անվավերության: Նման պայմանագիրն առոչինչ է:»

Խնդրի փաստերի համաձայն՝ Արթուրը Արտաշեսին հանձնել է դրամական միջոցներ, իսկ Արտաշեսը պարտավորվել է վերադարձնել նույն չափի գումար և վճարել տոկոսներ: Ընդ որում, հարկ է նշել, որ չնայած այն հանգամանքին, որ փոխառության պայմանագիրը կնքվել է 2022 թվականի օգոստոսի 18-ին, այնուամենայնիվ այդ պայմանագիրը պետք է կնքված համարել գումարը հանձնելու պահից, այսինքն՝ պայմանագիրը պետք է կնքված համարել 2022 թվականի սեպտեմբերի 10-ին: Կողմերը պահպանել են փոխառության

պայմանագրի կնքման ձևը, քանի որ ի հավաստում փոխառության պայմանագրի առկա է ստացական:

Օրենսգրքի 879-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն. «1. Փոխատուն իրավունք ունի փոխառության գումարից տոկոսներ ստանալ փոխառուից, եթե այլ բան նախատեսված չէ փոխառության պայմանագրով: Փոխառության պայմանագրում հստակ պետք է սահմանվեն տոկոսների չափը և հաշվարկման կարգը: Փոխառության պայմանագրի կնքման պահին տոկոսների չափը չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը:»:

Օրենսգրքի 880-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն. «1. Փոխատուն պարտավոր է, փոխառության պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով, փոխատուին վերադարձնել ստացված փոխառության գումարը: Այն դեպքում, երբ վերադարձնելու ժամկետը պայմանագրով որոշված չէ կամ որոշված է ցպահանջ, փոխառության գումարը փոխատուն պետք է վերադարձնի այդ մասին փոխատուի պահանջը ներկայացնելու օրվանից երեսուրյա ժամկետում, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:»:

Օրենսգրքի 881-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն. «1. Եթե փոխատուն սահմանված ժամկետում չի վերադարձնում փոխառության գումարը, ապա փոխառության պայմանագրով նախատեսված տոկոսները դադարում են, իսկ այդ գումարին ենթակա են վճարման միայն սույն օրենսգրքի 411 հոդվածի 1-ին կետով նախատեսված չափով տոկոսներ, սկսած այն օրվանից, երբ գումարը պետք է վերադարձվեր մինչև գումարը փոխատուին վերադարձնելու օրը: Փոխառության պայմանագրում այլ պայմաններով տոկոսներ վճարելու վերաբերյալ համաձայնությունն առոչինչ է:»:

Օրենսգրքի 882-րդ հոդվածի համաձայն. «1. Փոխատուն իրավունք ունի վիճարկել փոխառության պայմանագիրը, եթե ապացուցում է, որ ինքը փոխատուից իրականում դրամ կամ այլ գույք չի ստացել կամ ստացել է պայմանագրում նշվածից ավելի պակաս քանակով: 2. Վկաների ցուցմունքների միջոցով սույն հոդվածի 1-ին կետով սահմանված հիմքերով փոխառության պայմանագրի վիճարկում չի թույլատրվում, բացառությամբ այն դեպքերի, երբ պայմանագիրը կնքվել է խաբեության, **բռնության**, սպառնալիքի, փոխառուի ներկայացուցչի և փոխատուի չարամիտ համաձայնությամբ կամ այլ ծանր հանգամանքների բերումով: 3. Եթե փոխառության պայմանագիրը սույն հոդվածի 1-ին կետով սահմանված հիմքերով վիճարկելիս պարզվում է, որ փոխատուն դրամը կամ այլ գույքն իրականում չի ստացել փոխատուից, փոխառության պայմանագիրը համարվում է չկնքված: Եթե դրամը կամ այլ գույքը փոխատուն փոխատուից ստացել է պայմանագրում նշվածից ավելի պակաս քանակով, պայմանագիրը կնքված է համարվում ստացված քանակի գումարի կամ գույքի չափով:»:

Օրենսգրքի 426-րդ հոդվածի համաձայն. «Պարտավորությունը լրիվ կամ մասնակի դադարում է միատեսակ հանդիպական այն պահանջի հաշվանցով, որի ժամկետը լրացել է կամ նշված չէ, կամ որոշված է պահանջի պահով: Հաշվանցի համար բավական է մեկ կողմի հայտարարությունը:»: Օրենսգրքի 427-րդ հոդվածի համաձայն. «Պահանջների

հաշվանց չի թույլատրվում, եթե՝ 1) մյուս կողմի դիմումով պահանջի նկատմամբ ենթակա է կիրառման հայցային վաղեմության ժամկետ և այդ ժամկետը լրացել է. 2) դրանք վերաբերում են կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցմանը. 3) դրանք վերաբերում են ալիմենտի բռնագանձմանը: Պահանջների հաշվանց չի թույլատրվում նաև օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:»:

Ըստ խնդրի փաստերի՝ փոխառության պայմանագիրը պետք է կնքված համարել 2022 թվականի սեպտեմբերի 10-ից, որից էլ պետք է հաշվել փոխառուի կողմից գումարը վերադարձնելու ժամկետը: Խնդրի փաստերի համաձայն՝ 2022 թվականի սեպտեմբերի 10-ի ստացականում նշված չէ գումարը վերադարձնելու ժամկետը, սակայն, քանի որ կողմերի միջև 2022 թվականի օգոստոսի 18-ին կնքվել է փոխառության պայմանագիր անունով փաստաթուղթ, որտեղ երկու կողմերն էլ համաձայնել են գումարի վերադարձի ժամկետ սահմանել 5 ամիսը, ուստի փոխառուի կողմից գումարը վերադարձնելու ժամկետ պետք է համարել 2022 թվականի սեպտեմբերի 10-ից հաշված 5 ամիսը:

Փոխառության պայմանագրով սահմանվել են տոկոսներ, որոնք սակայն չեն կարող կիրառվել ծագած փոխառության հարաբերությունների նկատմամբ, քանի որ գերազանցում են Օրենսգրքով սահմանված չափը, ինչպես նաև ստացականում նշում չկա այդ տոկոսների մասին, իսկ Օրենսգրքի 879-րդ հոդվածը պարտավորեցնում է կողմերին պայմանագրով հստակ սահմանել տոկոսների չափը և հաշվարկման կարգը:

Այսինքն, կարող ենք փաստել, որ տոկոսների վերաբերյալ պայմանը համաձայնեցված չէ և փոխառության պայմանագիրը պետք է համարել անհատույց պայմանագիր: Խնդրի փաստերի համաձայն՝ փոխառուն վիճարկում է փոխառության պայմանագիրն անփողության հիմքով, ընդ որում՝ նշելով, որ 3 650 000 դրամ գումարը նշվել է բռնության ազդեցության ներքո: Նման դեպքում, փոխառուն կարող է իր փաստարկներն ապացուցել վկաների (խանութի աշխատակիցների) ցուցմունքների միջոցով: Եթե դատարանը վկաների ցուցմունքները համարի արժանահավատ, ապա փոխառության պայմանագիրը կհամարի կնքված 650 000 դրամի չափով:

Ինչ վերաբերում է հաշվանց կատարելուն, ապա փոխառուն բաց է թողել այդ պահանջով դատարան դիմելու համար սահմանված երեք տարվա հայցային վաղեմության ժամկետը, որի արդյունքում հաշվանց չի թույլատրվի, եթե փոխատուն հայտարարի, որի փոխառուի պահանջի նկատմամբ կիրառելի է հայցային վաղեմության ժամկետ:

Հարց 2 Սույն հարցի շրջանակներում անհրաժեշտ է անդրադառնալ Օրենսգրքի 881-րդ և 883-885-րդ հոդվածներին:

Հոդված 883. Փոխառուի պարտավորության ապահովման կորստի հետևանքները Փոխառուի կողմից փոխառության պայմանագրով նախատեսված փոխառության գումարը վերադարձնելու պարտավորության ապահովման պարտականությունները չկատարելու, ինչպես նաև նման ապահովման կորստի կամ դրա պայմանների վատթարացման այնպիսի հանգամանքներում, որոնց համար փոխատուն պատասխանատվություն չի կրում, վերջինս իրավունք ունի փոխառուից պահանջել վաղաժամկետ վերադարձնելու

փոխառության գումարը և վճարելու հասանելիք տոկոսները, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

Փոխառության տեսակները

Հոդված 884. Նպատակային փոխառություն

1. Եթե փոխառության պայմանագիրը կնքված է փոխառուի կողմից ստացված միջոցները որոշակի նպատակների համար օգտագործելու պայմանով (նպատակային փոխառություն), փոխառուն պարտավոր է ապահովել փոխառության գումարի նպատակային օգտագործման նկատմամբ փոխատուի վերահսկողության հնարավորությունը: 2. Փոխառուի կողմից փոխառության գումարի նպատակային օգտագործման մասին փոխառության պայմանագրի պայմանը չկատարելու, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված պարտականությունները խախտելու դեպքում փոխատուն իրավունք ունի փոխառուից պահանջել վաղաժամկետ վերադարձնելու փոխառության գումարը և վճարելու հասանելիք տոկոսները, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

Հոդված 885. Պետական փոխառության պայմանագիր

1. Պետական փոխառության պայմանագրով՝ որպես փոխառու հանդես է գալիս Հայաստանի Հանրապետությունը, իսկ փոխատու՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը: 2. Պետական փոխառությունները կամավոր են: 3. Պետական փոխառության պայմանագիրը կնքվում է փոխառուի թողարկած պետական այն պարտատոմսերը կամ պետական այլ արժեթղթերը փոխատուի կողմից ձեռք բերելու միջոցով, որոնք հավաստում են դրամական միջոցները, այլ գույքը, սահմանված տոկոսները կամ այլ գույքային իրավունքները փոխառության թողարկման պայմաններով նախատեսված ժամկետներում փոխառուից ստանալու փոխատուի իրավունքը: 4. Շրջանառության մեջ թողարկված փոխառության պայմանների փոփոխություն չի թույլատրվում: 5. Պետական փոխառության պայմանագրի մասին կանոնները համապատասխան կանոնները համապատասխանաբար կիրառվում են համայնքների թողարկած փոխառությունների նկատմամբ:

Հոդված 886.1. Ստորադաս փոխառություն

Փոխառության պայմանագրով, այդ թվում՝ պարտատոմսերի թողարկման և վաճառքի պայմաններով, կարող է նախատեսվել, որ փոխառուի լուծարման դեպքում փոխատուի պահանջները ենթակա են բավարարման փոխառուի մյուս բոլոր պարտատերերի պահանջները բավարարվելուց հետո (ստորադաս փոխառություն):

Խնդիր 4

Հարց 1 ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նման հանգամանքներ չեն, մասնավորապես, պարտականությունների խախտումը պարտապանի կոնտրագենտների կողմից, շուկայում անհրաժեշտ ապրանքների կամ պարտապանի մոտ անհրաժեշտ դրամական միջոցների բացակայությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 421-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կատարման կետանց թույլ տված պարտապանը պարտատիրոջ առաջ պատասխանատվություն է կրում կետանցով պատճառված վնասների և կետանցի ժամանակ պատահաբար առաջացած կատարման անհնարինության հետևանքների համար: Ինդրի փաստական հանգամանքներից հետևում է, որ Պատվիրատուի և Գնորդի հարաբերություններում վերջինս իրավունք չունի՝ որպես պայմանագրային պարտավորությունների չկատարման հիմք ու պատասխանատվությունից ազատվելու միջոց վկայակոչելու իր հետ այլ պայմանագրային հարաբերություններում գտնվող Մատակարարի կողմից պարտավորության չկատարման փաստը, քանի որ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումներով կոնտրագենտի կողմից պարտավորությունը չկատարելու փաստը չի դիտարկել որպես անհաղթահարելի ուժ:

Բացի այդ, Գնորդը կարող էր ազատվել պատասխանատվությունից բացառապես այն դեպքում, եթե հիմնավորեր խնդրո առարկա անհաղթահարելի ուժի առկայությունը, որը սույն պարագայում ընդհանրապես չի իրականացվել:

Հարց 2. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝

1. Պարտապանը կարող է սնանկ ճանաչվել դատարանի վճռով՝ սեփական նախաձեռնությամբ (կամավոր սնանկության դիմում) կամ պարտատիրոջ պահանջով (հարկադրված սնանկության դիմում), եթե պարտապանն անվճարունակ է:

2. Պարտապանը՝ դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել՝

1) հարկադրված սնանկության դիմումի հիման վրա՝ եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային

պարտավորությունների 90-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է (փաստացի անվճարունակություն): Վճարային պարտավորությունն անվիճելի է, եթե պարտապանը չի առարկում դրա դեմ, կամ եթե առարկում է հիշյալ պարտավորության դեմ, սակայն՝

ա) վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով, և բացակայում է հաշվանցի հնարավորությունը,

բ) պահանջը հիմնված է գրավոր գործարքի վրա, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),

գ) պահանջը բխում է օրենքով սահմանված հարկեր, տուրքեր, այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի (ներառյալ՝ պահանջի հաշվանցը),

դ) պահանջի չվիճարկվող մասը գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը:

Վերոգրյալ իրավական նորմը կիրառելով խնդրի փաստական հանգամանքների նկատմամբ՝ կարելի է փաստել, որ տվյալ դեպքում 90-օրյա և ավելի ժամկետով կետանցը, երկու միլիոն ՀՀ դրամը գերազանցող պահանջը և վճարային պարտավորության անվիճելի լինելու փաստերն առկա են, ու Պատվիրատուն իրավունք ուներ Գնորդին սնանկ ճանաչելու պահանջով դիմել ՀՀ սնանկության դատարան: